Արձանագրություն 02 /հայտերի բացման նիստ/

«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-09/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի

11 մարտի, 2019թ., ժ 10:00, ք. Գյումրի, Վարդանանց հրապարակ 1, Գյումրու համայնքապետարան

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բալաբեկյան – Գյումրու համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական

Հանձնաժողովի անդամներ՝

Մ. Մկրտչյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի տեղակալ,

Ռ. Անդրիասյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի պետ,

Լ. Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

Օ. Գևորգյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ.

1. «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-09/19» ծածկագրով ԳՀ ընթացակարգի առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 04.03.2019թ. էլեկտրոնային եղանակով ընթացակարգի հրավերի տեքստերը միաժամանակ հրապարակվել է www.gnumner.am և www.armeps.am ինտերնետային կայքերում:

1.2 Գյումրի համայնքի կարիքների համար սեղմված բնական գազի ձեռքբերման համար «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-09/19» ծածկագրով ԳՀ ընթացակարգի համաձայն գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

	Մասնակցի անվանումը
1.	**«ԶԱՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**
2.	**Ա/Ձ Ռուստամ Սարգսյան**

1.3 Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են eauction.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

1.4 Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

- Գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը կազմվել և ուղարկվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

1.5 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ և հրավերով պահանջվող հավելվածները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

1.6. Մասնակիցների առաջարկած գները

ՀՀ դրամ

ՀՀ	Ապրանքի անվանում	«ՁԱՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ			Ա/Ձ Ռուստամ Սարգսյան			Նախահաշվային գին
		ԱԱՀ	Միավորի արժեքը առանց ԱԱՀ	Միավորի արժեքը՝ ներառյալ ԱԱՀ-ն	ԱԱՀ	Միավորի արժեքը առանց ԱԱՀ	Միավորի արժեքը՝ ներառյալ ԱԱՀ-ն	Միավորի արժեքը՝ ներառյալ ԱԱՀ-ն
1.	Սեղմված բնական գազ	31.2	155.8	**187**	31.5	157.5	189	189

Հանձնաժողովը արձանագրեց՝

ա) «ՁԱՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Ռուստամ Սարգսյանի ներկայացրած գնային առաջարկները Պատվիրատուի մոտ առկա նախահաշվային գնի սահմանում են,
«ՁԱՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը նվազագույնն է:

Հանձնաժողովը որոշեց՝

ա) առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ուղարկել ծանուցում՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: Սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում հանձնաժողովը մերժում է Մասնակցի հայտը:

բ) Ինչպես նաև էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: Ստացված բացասական եզրակացության դեպքում Մասնակցի հայտը ենթակա է մերժման:

գ) Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա 18-ը մարտի, 2019թ.:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Ա. Բալաբեկյան (ԳՊ/ԳԱՊ)

Անդամներ՝ ---------- Ռ. Անդրիասյան (ԳՊ/ԳԱ)

---------- Մ. Մկրտչյան (ԳՊ/ԳԱ)

---------- Լ. Բարսեղյան (ԳՊ/ԲԱ)

---------- Օ. Գևորգյան (ԳՊ/ԲԱ)

Քարտուղար՝ ---------- Ա. Սարգսյան (ԳՊ/ՄՀմ)